

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Չինու քաղաքավարութիւն :

Չինացւոց հրաւերքի ժամանակ բանեցուցած մեծամեծ ու ստիպողական քաղաքավարութիւններն ու դիմացէն ալ տեսակ տեսակ կոտորտութիւնով հրաւերքը չընդունելով՝ Եւրոպա առակ ելած է ըսելով՝ Չինու քաղաքավարութիւն : Իրենց կրթութեան ամենակարեւոր մաս մը սեպուած է ասիկա, զոր երկու կողմն ալ, այսինքն թէ հրաւիրողն և թէ հրաւիրեալը պէտք է լաւ գիտնան ու դիտեն, թէ որ չեն ուզեր կոպիտ ու գէշ դատարարակութիւն մը առած երևնալ :

Եւս բանիս վրայ նոր դիպուած մը պատմենք, զոր հուր քարոզչին ճամբորդութեան մէջ կը կարդանք . որով լաւ կ'իմացուի՝ թէ երբ քաղաքավարութիւնն ալ չափը անցնի, ինչ ծանր ու պժգալի կու գայ անկեղծասէր ու կրթութեալ սրտի մը : Ի՞նչ տօնի մը օր էր, կ'ըսէ հուր, և մենք վարդապետանոցի մը մէջ, որ մեծ մատուռ մը ունէր, պատարագ պիտի մատուցանէինք, ուր որ ժողովուած էին բոլոր մերձակայ գեղերու քրիստոնեաներն ալ : Երբոր հանդէսը լընցաւ, տանտէրը սրահին մէջ կեցած սկսաւ բոլոր ձայնովը մատուռէն ելողներուն պոռալ . “ Չըլայ թէ մէկը դուրս երթայ, զամենքնիդ ալ բրինձ ու տելու կը հրաւիրեմք աս այսօր իմ տունս ” : Եւ ըսաւ ու վազեց սկսաւ մէկը մէկալը ստիպել որ հոն կենան, բայց ամէն մէկը մէյմէկ պատճառ բերելով հրաժարեցաւ, որով և բոլոր սրահը պարպուեցաւ մնաց : Տանտէրը աչքը դարձուց տեսաւ՝ որ իր եղբորորդին ալ դռնէն դուրս կ'ելայ, վազեց մէկէն ու սկսաւ երեսն 'ի վեր պոռալ . “ Եւնչ, միթէ դուն ալ պիտի երթաս . չէ, չէ, անկարելի բան է, այսօր տօն է, պէտք է որ հոս մնաս ” : Ի՞նչ կալը պատասխանեց . “ Չէ, զիս մի ստիպեր, պէտք է որ տունս երթամ ” : հոն հարկաւոր գործողութիւն ունիմ . — հարկաւոր գործողութիւն, բայց

այսօր հանգստեան օր է, բացարձակապէս դուն հոս պիտի մնաս, թող չեմ տար որ երթաս ” : Եւ ըսաւ ու քաշեց զգեստէն, և ամէն ջանք ըրաւ որ եղբորորդին ներս մտցնէ, անիկայ դէմ կը կենար և կ'ուզէր դուրս ելլել : Տանտէրը ան ատեն դարձաւ . “ Իրովհետեւ չես ուզեր, ըսաւ, ինծի հետ բրինձ ուտել, եկու ան ատեն մէկ քանի գաւաթ գինի խմենք . ամօթ կը սեպեմ ինծի իմ եղբորորդիս ինծմէ ճամբել առանց բան մը կերցնելու ” : Պատասխանեց միւսը . “ Եւտ լաւ . գաւաթ մը գինի խմելու շատ ատեն չուզեր, խմենք ուրեմն ” : այս ըսելով երկուքն ալ օտարականաց սենեակը մտնելով նստան : Եւ ատեն տանտէրը, բարձր ձայնով մը առանց մասնաւոր յանուանէ մէկու մը հրամայելու, պոռագ որ գինին շուտ տաքցուի և երկու հաւկիթ ալ եփուի : Յուսալով որ աս բաներս պիտի գան, սկսան ծխախոտ քաշել . ըմբոցաւ, նորէն քաշեցին, նորէն մէյմ՝ ալ, և ամէն անգամուն գինիին կը սպասէին . վերջապէս եղբորորդին որ ակամայ ստիպուած կեցեր էր, ալ համբերութիւնը հատած՝ հարցուց հօրեղբորը . “ Ի՞նչ շատ ատեն պէտք է արդեօք որ գինին տաքնայ ” : — Տանտէրը բոլորովին զարմանալով դարձաւ, “ Եւնչ, գինի, չես գիտեր որ, ըսաւ, ես գինի չեմ խմեր, վասն զի ինծի կը դպչի : — Եւնչն է նէ ըսաւ մէկալը, կրնայիր զիս ազատ թողուլ, ինչո՞ւ այսչափ ստիպեցիր ” : Եւ խօսքին տանտէրը ոտք ելաւ և բարկութեան կերպ մը ցուցնելով, ըսաւ . “ Եւրացիներէ կ'ուզէի իմանալ թէ ո՞ր դաւառէն ես դու . ես քաղաքավարութեան համար գինի հրամցուցի . և դուն ամենեւին չես հրաժարիր անկից . ոս ինչ անշնորհք բան . ամօթ չէ ” : Իողոնքունքով սորվեցար այս բարակութիւնը ” : Եւ եղբորորդին անդրադառնալով որ այսպէս քաղաքավարութեան հարկաւոր կանոնէ մը պակսեցաւ, մէկ քանի խօսքով թողութիւն խնդրեց, վառեց ծխախոտը, ու ելաւ գնաց : Իսկ որ աս հանդիսին մենք ներկայ էինք . երբ-

որ եղբորորդին գնաց՝ սկսանք լաւ մը խնտալ, բայց տանտէրը քիթը կախած էր խնտալու ախորժ չունէր, ետքէն դարձաւ մեղի՝ « Սա, ըսաւ, իմեղբորորդիէս աւելի ծաղրելու արժանի ու կոպիտ մարդ տեսեր էք », խօսակցութիւնն որ առաջ գնաց, վրայ բերաւ թէ ազնուական մարդ մը պէտք է որ հետզհետէ քաղաքավարութեան քաղաքավարութիւն փոխարինէ. պէտք է շնորհակալութեամբ հրաժարիս հրաւերքէն որն որ ուրիշ մը քեզի պատուով կ'ընէ. առանց ասոր ինչ կ'ըլլայ : Դեռ խօսքը երկնցուց աս տարօրինակ քաղաքավարութեանց վրայ : Մենք առանց բան մը պատասխանելու և մեր տեսածին անշնորհքութեան վրայ խորհրդածութիւն մը ընելու՝ մտիկ ըրինք, վասն զի շատ դժուար է կանոն մը տալ ու ճշմարտութիւնը հասկըցնել՝ երբ նախապաշարմունքն անոր հակառակը երկրին սովորութիւն է դարձուցեր :

ԲՆԱԿԱՆՔ

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Աշխատանքի Գիշերահաշտար :

Եւս ամսոյս 22^{ին} ըստ նորոց, Կոստանդնուպոլսի ժամ երեկոյեան 11, ըստ 26 ըստ եւրոպացւոց, աշխատանքի գիշերահաշտար է : Երեգակը, որ մարտի 20^{ին} ի վեր երկրիս հիւսիսային կիսագնտոյն վրայ էր, հասարակածը կ'անցնէ, և կը բերէ աշխատանքի զովաբար քամիները, որպէս զի վերջէն ձմեռուն բուրք վրանիս թափէ :

Հիւսիսային կիսագնտոյնը, որուն վրայ կը բնակինք, կը սկսի իր կենդանութիւնը կորստնցընել, և տերեւութափ ու դարկահար կը պատրաստուի սգոյ հանդերձն զգենուլ. սեպտեմբերի 22^ը, որ է գուշակ այս տիրազին աւուրցս մեր կիսագնտոյն, ընդհակառակն խնդութեան և յուսոյ աւետիս կու տայ հա-

րաւային կիսագնտոյն ինչուան բւեռային անբնակ խորշերուն : Եւս որ բոլոր աշխարհք գիշեր ցորեկ հաւասար կ'ըլլան. և հարաւային բւեռը, որ մարտի 20^{ին} սկսեալ անառաւօտ երկարատե գիշերոյ մը մէջ ընկղմեր էր, առաջին անգամարեւուն ոսկեփայլ ճառագայթները կը տեսնէ : Եւթէ այն սառուցեալ գաւառներուն մէջ բնակիչները լինան, կը տեսնեն չէ թէ արեւուն ամբողջ սկաւառակը, այլ միայն սկաւառակին վերին եզերքը իրենց հորիզոնին վրայ, որ 24 ժամուան մէջ իրենց չորս գին կը դառնայ : Եւրեւր նոյն օրն հասարակածին վրայ հասնելով, իր սկաւառակին վերին կէսը հարաւային կիսագնտոյն վրայ կ'իյնայ, ուր կը դիմէ, և ստորին կէսն ալ հիւսիսային կիսագնտոյն վրայ, զոր կը թողու և կը լքանէ :

Եւրկրագունտս, ինչպէս որ յայտնի է, երկու հաւասար կիսագնտոյն կը բաժնուի այն մտացածին գծէն, որ կուսարահած կամ ծիր գիշերահաշտարի կը սուի. սակայն արեւը այս երկու կիսագնտոյն վրայ հաւասար ժամանակ չկենար. այսինքն գիշերահաշտարի ծիրն վրայէն մէկ անցնելէն մինչև մէկալ անցքը ճիշդ վեց ամիս չէ : Եւթէ տարի, արեւը կը պատուէ իր ներկայութեամբ հասարակածին հիւսիսային կողմն ընկած երկրիս մասը եւթին օր ու քանի մը ժամաւելի քան զհարաւային կողմն ընկած մասը. որով մեր կիսագնտոյն ընդհանուր միջական զուգախառնութիւնն աւելի բարձր կ'ըլլայ քան թէ հարաւային կիսագնտոյն :

Եւրեւր հարաւային կիսագնտոյն վրայ սեպտեմբերի 22^{ին} մինչև մարտի 20 կը կենայ : Սեպտեմբերի 22^{ին} սկսեալ ինչուան դեկտեմբերի 21, հասարակածէն դէպ ի այծեղջեր արեւագարձը կ'ընթանայ, որ ժամանակն է մեր աշունը. դեկտեմբերի 21^{ին} ինչուան մարտի 20, այծեղջեր արեւագարձէն դէպ ի հասարակած կ'ընթանայ, որ ժամանակն է մեր ձմեռը : Եւրդ այս երկու եղանակաց տեղողութիւնը քննելով, կը տեսնենք որ մեր